

ՉԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը ստեղծվել է 2007 թվականին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի վերակազմավորման արդյունքում:

Նախարարության աշխատակազմը գործում է 11 կառուցվածքային ստորաբաժանումներով, այդ թվում՝ 6 վարչություն և 5 բաժին՝ 83 հաստիքային միավորով, որոնցից 60-ը քաղաքացիական ծառայության պաշտոններ են, այդ թվում՝ բարձրագույն պաշտոններ՝ 2, գլխավոր պաշտոններ՝ 41, առաջատար պաշտոններ՝ 12, կրտսեր պաշտոններ՝ 5:

Նախարարության աշխատողների միջին տարիքը կազմում է 44-45 տարեկան: Աշխատողների հիմնական մասը ոլորտում ունի միջինը 5-10 տարվա աշխատանքային ստաժ: Նախարարության աշխատողների կազմում կան տարբեր մարզաձևերի աշխարհի և Հայաստանի չեմպիոններ, սպորտի վարպետներ, սպորտի վաստակավոր վարպետներ և մարզիչներ, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պատվավոր և վաստակավոր աշխատողներ:

Նախարարության համակարգում գործում են 28 պետական ոչ առևտրային կազմակերպություններ, որոնք գործում են հիմնականում որպես մարզադպրոցներ Երևանում և հանրապետության տարբեր մարզերում, 2 մարզական քոլեջ՝ Երևանում և Գյումրիում, «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» և 3 պետական փակ բաժնետիրական ընկերություն («Դավիթ Համբարձումյանի անվան ջրացատկի օլիմպիական հերթափոխի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց», «Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիր», «Հավաքական թիմերի մարզական կենտրոն»):

Նախարարության «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» և «Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական

ոչ առևտրային կազմակերպությունները մարզիկների պատրաստման ինքնատիպ դարբնոցներ են, որտեղ երեխաները ոչ միայն մարզական պարապմունքներ են ունենում, այլև ստանում են միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն: Բարձր առաջադիմություն ունեցողները ուսումը շարունակում են ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում:

Երևանի մարզական քոլեջը ներկայումս ունի 594 սան, որոնք մասնագիտանում են 11 մարզաձևով: Այստեղ ՀՀ մարզերից 160 սովորող ապահովված են նաև գիշերակացի պայմաններով, իսկ Գյումրիի մարզական քոլեջը ունի 333 սան, որոնք մասնագիտանում են 8 մարզաձևով:

Նախարարությունը իր հիմնական գործառույթներն իրականացնում է հետևյալ ծրագրերով՝

- բարձրագույն նվաճումների սպորտ,
- մասսայական սպորտ,
- կրթություն և գիտություն,
- երիտասարդական ծրագրեր:

Ծրագրերը հիմնականում իրականացվում են նախարարության աշխատակազմի համապատասխանաբար սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության վարչության, մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության, մարզական կազմակերպությունների և մանկապատանեկան սպորտի քաղաքականության վարչության և երիտասարդական քաղաքականության վարչության միջոցով:

ՀՀ կառավարության գերակա և միջոցառումների ցանկերում ընդգրկված՝ նախարարության խնդիրների իրականացման համար կազմակերպվել և անցկացվել են բազմաթիվ միջոցառումներ:

Նախարարության աշխատակազմի 2013 թվականի աշխատանքային ծրագիրը իրականացվել է 44 կետով, որոնցից 13-ը նպատակային ծրագրեր են, 31-ը՝ ընթացիկ: 2013 թվականի առաջին կիսամյակի աշխատանքային ծրագրի կատարողականի ընդհանուր գնահատականը կազմել է 88.4 %, իսկ երկրորդ կիսամյակինը՝ 97.85 %: Ցուցանիշների աճը պայմանավորված է քաղաքացիական ծառայողների աշխատանքների արդյունավետության բարձրացմամբ:

2013 թվականի կատարողականն ըստ բյուջեի գերատեսչական դասակարգմամբ բոլոր ծրագրերի մասով իրականացվել է 99.11 %-ով, այդ թվում՝

- սպորտի բարձրագույն նվաճումների գծով ծրագրերը իրականացվել են 99.75-ով (պլան՝ 1,296 364 20 հազ. դրամ, կատարողականը՝ 1.292 969 32 հազ. դրամ), այդ թվում՝ հաշմանդամային սպորտի ծրագրերի կատարումը կազմել է 99.99 % (պլան՝ 16.948 80 հազ. դրամ, կատարողականը՝ 16.947 12 հազ. դրամ),

- մասսայական սպորտի մասով՝ 98.44 % (պլան՝ 177.800 80 հազ. դրամ, կատարողականը՝ 175.032 93 հազ. դրամ),

- երիտասարդական ծրագրերի մասով՝ 99.46 %, (պլան՝ 265.335 60 հազ. դրամ, կատարողականը՝ 263.909 73 հազ. դրամ),

- կրթության մասով՝ 99.65 % (պլան՝ 2.462 597 80 հազ. դրամ, կատարողականը՝ 2.453 930 08 հազ. դրամ):

Նախարարության աշխատանքների բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանն իր օժանդակումը կբերի նաև նախարարության աշխատակազմի համապատասխան մասնագետներով նոր համալրված ներքին աուդիտի բաժինը՝ իր գործունեությամբ, մասնավորապես՝ ներքին հսկողության համակարգի և ռիսկերի կառավարման գործընթացների արդյունավետ իրականացման գործում:

Նախարարության աշխատակազմը միջազգային համագործակցության ուղղությամբ իրականացրել է մի շարք գործառույթներ, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության, Ուրուգվայի Արևելյան Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության սպորտի պատասխանատու մարմինների հետ: Սպորտի ոլորտում համագործակցության նպատակով մշակված միջգերատեսչական համաձայնագրերն արդեն ներպետական համաձայնեցման փուլ են անցել և գտնվում են ՀՀ արտաքին գործերի նախարարությունում:

Ներկայումս նախարարության աշխատակազմն աշխատանքներ է իրականացնում 2015-2017 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի մասով նախարարության զարգացման ռազմավարական ծրագրի մշակման ուղղությամբ: